



“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԺԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1886

ԹԻԻ 12

Մ Ա Տ Ր Ա Ս


Կարկաթայէ և Պոմպէյէ ետքը Հընդ-կաստանի մեծագոյն քաղաքն է Մատրաս, որուն նաւահանգիստը կը ներկայացուի պատկերին մէջ: Կոր քաղաք է այն Հնդկաստանի քաղաքացի մէջ, վասն զի միայն 250 տարի առաջ շինուեցաւ, և սակայն կը պարունակէ 400,000 բնակիչ: Ութևտաններորդ դարուն մէջ շատ անգամ պաշարուեցաւ և անգամ մը առնուեցաւ իսկ Գաղիացիներէն, բայց աւելի քան 100 տարիէ հետէ ազատ մնացած է յարձակմանէ: Մատրաս է մայրաքաղաք հարաւային Հնդկաստանի և քանի մը երկաթուղիք կցուած են անոր:

Հնդկաստանի ծովեզերքը շատ քիչ ունին լաւ նաւահանգիստ, և նմանապէս Մատրաս ալ ունի նաւահանգիստ բայց ոչ ապահով վտանգներէ: Ժամանակ ժամանակ կ'ելլեն սաստիկ փոթորիկներ որովք մեծ կորուսաներ կ'ըլլան նաւերու: Հարիւր քառասուն տարի առաջ երբ Գաղիացիք առած էին քաղաքը, պատահեցաւ այս սաստիկ փոթորիկներէն մին, և անոնց նաւատորմէն 5 նաւեր ընկղմեցան անոնց մէջ դանուած 1,200 մարդերով: Ասկէ միայն 14 տարի առաջ ելաւ փոթորիկ մը որ քանի մը ժամերու մէջ 29 նաւ մղեց ծովեզրը:

Պատկերը կը ցուցնէ բնիկներու նաւակներ որոցմէ մարդիկ կ'ելլեն ցամաք: Այս նաւակներն են շատ թեթիւ և անոնց մասերն իրարու կցուած են առանց կողերու որոց վրայ գամուին նաւակին քովի տախտակները, և կամ առանց գործածելու միակ գամ մը իսկ: Անոնք իրարու կը կարուին քոբոյ ընկուղի թելերով, տախտակներուն միջոցները կը լեցուին խժուժով, և անոնց

ներսի կողմը պատած է յարգով: Եւ լավորք շատ ճարպիկ են և այս ակար նաւակներով կը ճամբորդեն ալեաց մէջէն, որ անփորձ մարդու մը կը թուի թէ պիտի ընկղմեն զանոնք: Փորձով զխտենք թէ Մաման և Տրապիզոն ելել ծովէն՝ բաւական դժուար է ժամանակ ժամանակ, բայց Մատրաս ելել աւելի դժուար է:

որ նստած իւր մօրը քով կը ջանար սորվիլ առաջին պատուիրանը, որ էր անոր կիրակնօրեայ դպրոցի դասը, բայց չէր կրնար հասկնալ անոր նշանակութիւնը: Անոր մայրը սր էր շատ խմաստուն կին, միշտ կ'ըսէր անոր որ նախ քան «անչի» սորվիլ պոյն, և միայն այն ատեն հարցնէ երբ ինք իրմէ սորված ըլլայ ամէն ինչ որ կրնայ այդ կերպով:



ՄԱՏՐԱՍ ԳԱՂԱՔԻՆ ՆՈՒԱՆՆԻՍԵ

Պատկերին մէջ կը ցուցուի ուրիշ տեսակ մի ևս նաւակի որ կը բաղկանայ լոկ երեք կտոր հասա տախտակէ որ կարուած են իրարու: Այս կտորներէն միջինն է երկայն քան միւսները: Բնիկը որ կը թիալարէ այս նաւակը, և զոր տեղացիք կը կոչեն «աւարան», շատ անգամ կ'աւրուի ալիքներէն, բայց այնչափ ճարպիկ է որ չուտով դարձեալ կ'ելլէ նաւակին վրայ առանց կորսնցունելու իւր թիւերը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆԸ

«Իմ առջևս ուրիշ աստուածներ չունենաս»: Ժամանակաւ կար փոքրիկ աղջիկ մը

«Ի՞նչ ունիս, Մարիամ», հարցուց մայրը:

«Ո՛հ, ի՛նչ դժուարին դաս է այս առաջին պատուիրանը: Ես երէկ իրիկուն հարցուցի հայրիկին, թէ ինչ կը նշանակէ այն, և ըսաւ որ, կը նշանակէ թէ մենք չպարտինք սիրել որեւէ ոք Աստուծմէ աւելի, և ես այնուհետեւ միշտ ջանացած եմ հաւտացունել զիս թէ ես սիրեցի զԱստուծոյ առաւել քան որչափ կը սիրէի զքեզ և հայրիկը. բայց, մայրիկ, ես այդպէս չեմ կրնար ընել, և անօգուտ է կարծել թէ ես կը սիրեմ զԱստուծոյ անէ աւելի: Ես պիտի թողում և չսորվիմ այս անհանդ դասը:»

Մայրը չըսաւ այն ատեն բան մը . բայց մէկ երկու ժամ ետքը ըսաւ Մարիամու, «Կ'ուզեմ որ բերես ինձ այն ամանը զոր կտորեցիր երէկ . կ'ուզեմ փորձել թէ արդեօք կրնամ անոր կտորներն իրարու փակցունել թէ ոչ :»

Փոքրիկ աղջիկը վաղեց շուտով բերել ամանն իւր մօրը, վասն զի զայն շատ կը սիրէր անոր հայրը, և դիպուածով Մարիամ կտորած էր զայն նախընթաց օրը : Երբ ներս բերաւ, մայրը նայեցաւ ամանին վրայ մեծ

այնպէս լաւ փակցուած էր որ ոչ ոք կարող էր իմանալ թէ կտորած էր այն, բայց միայն այս կտոր որ քիչ մը կ'երևէին շաղախի նշաններ ամանին դուրսի կողմը չորցած :

« Հիմա, Մարիամ, » ըսաւ մայրը, « եթէ հայրիկդ տեսնէ շաղախին այդ փոքրիկ նշանը, անատրակոյս պիտի հարցնէ թէ ով կտորած է ամանը : Եւ եթէ հարցնէ, կ'ուզեմ որ ըսես թէ բնաւ կտորուած չէ այն, թէ դուն տեսար անոր վրայ այն նշանը երբ առաջին անգամ բերաւ ամանը շուկայէն սուն :»

րեմ, ըսէ, ինչո՞ւ համար չես կրնար ընել :»


« Մայրիկ, վասն զի, վասն — զի :»

« Ի՞նչ, վասն զի, ի՞նչ :»

« Վասն — վասն զի Աստուած կ'ըսէ որ սուտ չխօսինք :»

« Ո՛հ, ուրեմն դուն կը սիրես զԱստուած առաւել քան որչափ հայրդ կամ մայրդ . այնպէ՞ս է :»

« Ո՛հ, մայրիկ, » ըսաւ Մարիամ, « հիմա կը հասկնամ, թէ ուղիղ գործ երբ շանայն է սիրել զԱստուած առաւել քան որեւիցէ բան :»



ՈՒՆՏՍՈՐԻ ԳՂԱՍԿ

ուշադրութեամբ, և յետոյ հանեց գործոցէն շաղախի շիշ մը և սկսաւ կտորներն իրարու փակցունել : Մարիամ կը դիտէր իւր մայրը մեծ անձկութեամբ, վասն զի պատրաստ էր տալ գրեթէ ամէն բան ամանը դարձեալ իւր չկտորած վիճակին մէջ դըրուելու համար : Վերջին կտորն ևս փակցուեցաւ, և վար դրուեցաւ ամանը որպէս զի շաղախը կարծրանաւ : Կէս օրուան ճաչէն ետքը, Մարիամ և մայրը եկան ամանին քով և նայեցան որ կրնար վերցուիլ դիւրաւ և առանց կտորներն իրարմէ բաժնուելու : Մարիամ ուրախութենէն իրարու դարկաւ իւր ձեռու ընթերց, վասն զի ամանն

« Ո՛հ, մայրիկ, ի՞նչ կ'ըսես :»

« Ճիշդ ինչ որ կ'ըսեմ : Ըսէ հայրիկիդ ճիշդ ինչ որ ըսի քեզ :»

« Բայց, մայր, ես չեմ կրնար ընել այդ բանը :»

« Ի՞նչ, Մարիամ : Չե՞ս կրնար ընել ինչ որ ըսի քեզ : Ի՞նչ տեսակ սէր է այդ զոր ունիս մօրդ վրայ, անհնազանդ ըլլալով անոր : Գնա ուղղակի հօրդ, երբ ներս կու գայ, և ըրէ ինչպէս ըսի քեզ, եթէ բան մը հարցնէ ամանին կտորելուն վրայ :»

« Բայց, մայրիկ, այդ — — — ի՞նչ է :»

« Ուրեմն ի՞նչ ըսել է այդ : Եթէ դուն կը սիրես քու մայրդ, և նա կ'ըսէ քեզ որ ընես չար բան մը, կը խընդ-

ՈՒՆՏՍՈՐԻ ԳՂԱՍԿ

Այս գեղեցիկ պատկերը կը ցուցնէ մեզ Ունտսորի գեղեակը որ է «աշխարհիս մեծագոյն և շքեղագոյն արքայական բնակարաններէն մին :» Ունտսոր է փոքր քաղաք Թէմը գետոյն վրայ Լոնսոնէ իւր 20 մընս դէպ արևմուտք : Գուրիէլմու Աշխարհակալ որ եղաւ թագաւոր Անգղիոյ, 1066ին, գնեց այն տեղը որպէս զի գեղեակ մը կառուցանէր հին : Այժմու գեղեակը կառուցուեցաւ Եդուարդ Գ. ի թագաւորութեան ժամանակը (1327-1377), որ կործանեց հինը և ուրիշ մը կառուց անոր տեղը : Յետոյ անոր յաջորդող թագաւորները մասեր աւել-

ցուցած են դեղեակին վրայ, և վեր-
թորիա թագուհւոյն իշխանութեան
ժամանակը անոր ծախսուած ստակին
գումարը հասած է 900,000 Անգլ.
ստերլինգ: Դեղեակը կը պարունակէ շատ
մը դեղեցիկ սրահներ, բայց անոնց
մէջ ամենէն աւելի ուշագրութիւն
գրաւորն են երկու մատուռներ, որոց
մին կը պարունակէ քանի մը Անգլիացի
թագաւորաց դամբարանները, և միւսը
չինած է մեծ ծախքով թագուհին ի
յիշատակ իւր ամուսնոյն որ թաղուած
է հոն:

Ուրիշտորի դեղեակն է վերթորիա
թագուհւոյն գլխաւոր պալատը, բայց
նա ունի ուրիշ պալատներ ևս: Կայ
պալատ մը որ կը կոչուի Պրքինկհամ
պալատ և է Լոնտոնի կեդրոնական
մասին մէջ, ուրիշ մը՝ ի Պարմորալ Սկոլ-
տիոյ վերնագաւառաց մէջ, ուր թա-
գուհին կ'անցունէ ամարուան մեծ մա-
սը: Կայ ուրիշ մը ևս յՕղպրըն, Ուայթ
կղզւոյն վրայ, Անգլիական Զբանցին
մէջ: Յառաջիկայ գարնան կ'աւարտի
թագուհւոյն գահակալութեան յիսնե-
րորդ տարին, և Անգլիացիք կ'ակրն-
կալեն սոնակամբել անոր յորեւեանը
մեծ շքեղութեամբ:

ՔԱՋԱՍԻՐՏ ՏՂԱՅ ՄԸ

Եթէ ապրած ըլլայինք այն ատեն
երբ Քլէվլըրհաուզցի կրահամ վեր և
վար կը պտտէր ի Սկոթլիա փնտուել
քաջ Ուիստոդները, որպէս զի զնոսա
բանտը դնէր կամ սպաննէր սա մեծ
ոճրին համար որ անոնք Աստուածա-
շունչ կը կարգային, կամ մէկտեղ կը
ժողովէին Աստուծոյ ազօթը և փա-
ռաբանութիւն մատուցանել, որ մը
պիտի տեսնէինք թէ համարձակ կը
պտտէր դեռաւոր Սկոթլիացի պա-
տանեակ մը:

Նա ունի իւր ձեռքը գիրք մը, և
կամաց կամաց կ'առնու իւր քայլերը
վասն զի անոր ուշագրութիւնը գրաւ-
ուած է գիրքին խօսքերով:

Բայց տե՛ս, ի՞նչ են ձիոց սմբակ-
ներուն դովման և զինուց զօղանջման
ձայները: Սոսկալի զինուորաց գունդն
է այն որ կը փնտռէ ապստամբները,
ինչպէս կը կոչուէին:

Շուտով անոնք կը հասնին տղուն:
«Ի՞նչ է ձեռքիդ», կը հարցնէ խում-
բին գլխաւորը: «Աստուածաշունչն է»,
կը պատասխանէ տղան անխուով: «Նե-
տէ զայն այդ խրամը», կը գոչէ վոյ-
րենաբար խրոխտ հարիւրապետը:
«Չեմ նետեր»: «Նետէ զայն խրամը,
կ'ըսեմ», «Չեմ նետեր», կ'ըսէ տրժ-

գոյն երես և սակայն հաստատամիտ
դեռաւոր զինուորն ֆրիստոսի, աւելի
պնդիւ սեղմելով իւր անգին գանձը
իւր սրտին վրայ, մինչ զինուորք յա-
ռած աչքով կը նային անոր, և ան-
գութ հարիւրապետը, կատղած իւր
բարկութենէն այսպէս արհամարհուած
ըլլալուն համար այն պատանեակէն,
կ'աղաղակէ, «Եթէ դուն չես նետեր
խրամը զայն, քեզ պիտի սպաննեմ»:

Բայց Յիսուս ֆրիստոս տղին հետ է,
վասն զի հանդարտ վստահութեամբ
և որոշմամբ՝ որպէս զի չանարդէ իւր
սիրելի Գիրքը, կը կենաց պողպատի
պէս հաստատուն, և հաւատարիմ իւր
Փրկչին և Տէրոջը, և թէպէտ մահ
կը սպառնան անոր երեսին, կը պա-



ՖԻՐԻՆԻ ՔՐՈՒՆԻ ՄԸ

տասխանէ միայն, «Ես չեմ կրնար,
չեմ նետեր»:

«Կրա՛կ ըրէք», կը գոչէ անողորբի
պետը զինուորաց, և հոն կը թափուի
դեռահասակ մարտիրոսին կենաց ջերմ
արիւնը երբ կ'էնայ գետին ծակժրկ-
ուելով իւր անգութ սպանողներուն
արձակած գնտակներէն:

Ճշմարիտ է թէ չկան այժմ Քլէվլըր-
հաուզներ որ պտտին երկրի վրայ
որպէս զի կոխան ստից ընելով Սա-
տուծոյ խօսքը մարեն անոր լոյսը ան-
գթութեամբ և բռնի, բայց կը գրա-
նուին դպրոց գացող շատ տղայք որ
կը ծաղրեն իրենց աշակերտակիցներէն
զայնպիսիս որ են «բարեպաշտ» և
կամ կը զատուին ուրիշներէն «որպէս
զի աւելի բարեպաշտ ըլլան», և շատ
անգամ աւելի քաջութիւն պէտք
կ'ըլլայ համբերել կծու և կամ ար-

համարհոտ խօսքերու քան թէ ծեծի:
Թող ոչ որ բռնադատելով տայ քեզ
թողուլ Աստուածաշունչ կարգալը,
կամ մանաւանդ Աստուածաշունչին
համեմատ ապրիլը: Աստուած բսած
է, «Բնաւ քեզ պիտի չթողում, ու
բնաւ քեզ երեսէ պիտի չձգեմ»:
անանկ որ համարձակ ըլլանք ըսելու,
«Տէրը իմ օգնականն է, ու ես պիտի
չվախնամ, մարգը ինձի ի՞նչ պիտի
ընէ»:

ՖԷԹԻՇ

Այս բառը որ չկրնար թարգմանուիլ
չայերէնի, կը ցուցնէ կրօնքի ստորնա-
գոյն տեսակ մը որ անաստուածու-
թենէն քիչ բարձր է: Կուսպաշաք
կը կարծեն թէ իրենց շատուածներն
են անձինք և կու տան անոնց անուն-
ներ: Բայց Ֆէթիշները պաշտողը միայն
կը խորհի թէ կայ զարմանալի զօրու-
թիւն մը որ կը պաշտպանէ զնա կամ
կու տայ աղէկ կամ գէշ բաղդ իբրև
բնակած այսինչ առարկայից մէջ:
Վասն որոյ Ֆէթիշներ պաշտողները
ըստ մեծի մասին կը գտնուին Ափրի-
կէի սևամորթ բնակչաց մէջ:

Երբ Կուինէացի սևամորթ մը պիտի
ընէ ճամբորդութիւն, կ'ընտրէ առար-
կայ մը, թերևս քար կամ ոսկր, և
կ'ուխտէ պաշտել զայն եթէ տայ անոր
յաջող ճամբորդութիւն. բայց եթէ
չտայ, կը նետէ զայն: Շատ անգամ
Ֆէթիշ մը կը պահէ տանը մէջ և անոր
խորհուրդ կը հարցնէ ամէն կարևոր
առիթներու ժամանակ: Եթէ խրատը
որ կը կարծուի թէ առած է նա, գէշ
ելլէ, Ֆէթիշին կու տայ վատ անուն-
ներ, կը կոխտտէ զայն, կը քաշկուտէ
ցետի մէջ, որպէս զի լաւ խրատ տայ
յաջող անգամ: Երբեմն սևամորթը
այնչպիսի կը բարկանայ իւր Ֆէթիշին
գէմ անոր աղէկ բաղդ չտալուն հա-
մար որ ծեծելով զայն կտոր կտոր
կ'ընէ և կը նետէ:

Պատկերը կը ցուցնէ Ֆէթիշի քըր-
մուհի մը: Այս կարգէ անձինք կը հա-
մարին թէ առնչութիւն ունին Ֆէ-
թիշին մէջ բնակող հոգւոյն հետ և
իշխանութիւն՝ անոր վրայ: Երբ մարդ
մը հրանդ ըլլայ, կը կանչուի քրմու-
հին որպէս զի վանէ անկէ զօրութիւնը
որ կը կարծուի թէ կը սպառնայ մար-
դուն կենանքին: Քրմուհին վեր կը ցատ-
կէ և ճշելու ձայներ կը հանէ, և այն-
չպի կը գրգռէ հրանդը որ անոր ա-
ռողջանալուն յոյսը շատ կը պակսի:
Երբեմն կենդանիներ կը գոհուին
Ֆէթիշին, երբեմն մարդաղոհներ ևս
կ'ըլլան: Երոպացի մը կը պատմէ թէ

փոքրիկ տղեկ մը բռնուեցաւ անգամ մը և սպանուեցաւ առաջ անոր մասին մէկ յօդուածը կտրելով և այնուհետև ուրիշ մը, և այսպէս շարունակելով մինչև որ մեռաւ նա, որպէս զի հաշտուէր Ֆէթիշը որ արգելած էր անձրեւը:

Այս քրմուհիներէն շատ կը վախնայ ժողովուրդը, վասն զի եթէ ցեղապետ մը հիւանդանայ կամ դժբաղդութեան մը հանդիպի, տարակցոյ չունին թէ պիտի ցուցնեն զանոնք որ նեղացուցած են զիրենք, իբրև այնպիսիներ որ կախարդած են ցեղապետը:

Ուրախ ենք թէ կան շատեր որ կը ջանան ծառայել Աւետարանին լոյսը Ափրիկեցի այս տգէտ ցեղերուն մէջ և աղօթք կ'ընեն որպէս զի Աստուած շատ յաջողութիւն տայ անոնց գործին: Բայց չէ՞ք կարծեր դուք, տղաք, թէ տեսակ մը Ֆէթիշ պաշտողներ են անոնք որ ուրուք և մանեակներ կը դնեն իրենց պարանոցներուն շուրջը չարակնութենէ պահուելու համար:

ՀԻՆ ԳՒԽԱՐԿ ՄԸ

Զարմանալի է հնարագիտութիւնը որ կ'երևի տիկնանց և օրիորդաց նոր ձևով գլխարկ շինուելուն մէջ:

Եթէ հին ժամանակի Ռուս տիկինը որ կը ներկայացուի մեր պատկերին մէջ, երևէր նորաձևութեանց հետևող քաղաքի մը փողոցը, անոր գլխարկին արտաքոյ կարգի երևոյթը շատ պիտի խնդացունէր տեսողները: Բայց նա ևս պիտի խնդար նոյնչափ ուժով եթէ տեսնէր այժմու գլխարկներէն մէկ քանին Մոսքուայի կամ Սբ. Բեթըրու պուրկի փողոցներուն մէջ 200 տարի առաջ: Եւ ըստ մեր դատման նա պիտի ունենար հաւասար իրաւունք խրնդալու:

ԱՅՐԱԿԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ

Տղայք շատ անգամ կը սխալին մեծապէս կարծելով թէ քաղցր բարքը և տկարութիւնը նոյն բանն են: Այն տղայք որ կրնան վազել և ցատկել և դնտակ խաղալ և ըլլալ պարագլուխ ուրիշ տղայոց, սովորաբար ու շաղբութիւն չեն տար մեղմ, փափուկ և մարդասիրական գործոց որ շատ հաճոյք կուտան այնպիսեաց որ ոչ կրնան ըլլալ առաջնորդ և ոչ հետևող այն խաղուց մէջ որ այնչափ հաճելի են: Տղայք պատրաստ են խորհել թէ մեղմ վարմունքը աղջկանց յատուկ է: Բայց սխալ է այս: Ոյժը եթէ չգործածուի անգութ գործի,

կը պաշտպանէ տկարները: Քաջ տղայ մը կը պաշտպանէ տկար տղաքը. և երկչառ տղան կը խրոխտայ տկարին դէմ: Տղայ մը որ սնի քաջ, զօրաւոր և ճշմարիտ սիրտ, չվախնար ցուցնել կարեկցութիւն: Մարդիկ որ հուշակաւոր եղած են իրենց դիւցաղնական գործերով, կը տեսնենք թէ էին նման տղայոց, նշանաւոր մտացի լինելու մասին, և իբրև մարդ՝ էին մեղմ և քաղցր առ տկարս և անօրնականս:

Կը պատմուի ճորճ Սթիֆընսընի համար, որ եղաւ հնարիչ առաջին շոգեկառքին, թէ երբ էր երիտասարդ, օր մը ելաւ իւր ասն վերի յարկի սենեակը և գոցեց պատուհանը: Երկար ժամանակ բաց թողուած էր այն օդոյն սաստիկ տաքութեան պատճառաւ, բայց որովհետև այն ատեն օդը սկսած էր զովանալ, Սթիֆընսըն խոր-



ՀԻՆ ԳՒԽԱՐԿԻ ՈՐՈՍ ՏԻԿԻՆ

հեցաւ թէ աղէկ կ'ըլլար գոցել զայն: Եւ քիչ բան զիտէր այն ատեն թէ ինչ կ'ընէր: Երկու երեք օր ետքը սակայն տեսաւ պատահմամբ որ թըռչուն մը կը թռչտէր այն պատուհանին առջև, և կը դարնուէր անոր իւր բուրբ ուժով կրկին և կրկին, իբր թէ ջանալով կտորել զայն: Արթնցաւ նորա կարեկցութիւնը և հետաքրքրութիւնը: Ի՞նչ կրնար ըլլալ թռչնիկին նպատակը: Խաղոյն գնաց սենեակը և բացաւ պատուհանը որ տեսնէր: Այն ինչ պատուհանը բացուեցաւ, թըռչունը թռաւ ուղղակի սենեկին մասնաւոր մէկ կողմը, ուր Սթիֆընսըն տեսաւ բոյն մը — փոքրիկ թռչնոյն բոյնը: Խեղճ թռչունը նայեցաւ անոր վրայ, հասկցաւ մէկ նայուածքով թէ ի՞նչ ցաւալի բան պատահած էր, և թռչունով ինկաւ տախտակամածին վրայ, տխրագին և դրեթէ մեռած:

Սթիֆընսըն մտնեցաւ նայել, և ահա լեցուեցաւ անպատմելի ցաւով: Բոյնին մէջ նստած էր մայր թռչունը, իւր ներքև ունենալով չորս փափուկ և փոքրիկ ձագեր, և թէ՛ մայրը թէ՛

ձագերը ամէնքը մեռած էին: Սթիֆընսըն լացաւ բարձր ձայնով: Մեղմ մով վերցուց մարած թռչունը տախտակամածին վրայէն. դեռ անոր բերանն էր որդ մը զոր այնչափ երկար ժամանակէ հետէ բռնած էր և քաջութեամբ աշխատած էր բերել բոյնը ձագերուն: Սթիֆընսըն խնամով ջանաց վերստին կենդանացունել զայն, բայց անոր բոլոր ջանքերն ելան ի դերև: Թռչնիկը մեռաւ շուտով, և այն մեծ մարդը սուգ պահեց շատ օրեր:

Այդ ժամանակ ճորճ Սթիֆընսընի մտքին ոյժը կը փոփոխէր երկրիս մակերեսին վիճակը, բայց նա լացաւ ի տես այս մեռեալ ընտանեաց, և խոր վիշտ զգաց, վասն զի ինք անձամբ թէպէտ առանց գիտնալու, եղած էր պատճառ այն թռչնոց մահուան:

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

- 1. Քահանայապետ մը ժամանակակից Պօղոսի.
- 2. Օտարադղի մարդարէ մը.
- 3. Երկիրն ուր Պօղոս կապեալ դրկուեցաւ.
- 4. Հիւրասէր անձ մը.
- 5. Բասանու մի գլխաւոր քաղաքը.
- 6. Դաւթի որդւոց մին:

Այս անունները կարգաւ գրուելով մին միւսոյններքև, ձախ կողմի սկզբնատուերը, վերէն վար կարդացուելով կը կազմեն Դաւթի կանանց միոյն անունը, իսկ վերջին տառերը, աչ կողմը, նոյնպէս կարդացուելով, կը կազմեն Յուդայի թագաւորաց միոյն անունը:

Կ. Պոլիս ՅՈՂՈՒՓ ՀԱՅԱՍՏԱՆ

Նոյեմբեր ամսոյ հանելուկին պատասխանն է, —

«Արդարին պտուղը կենաց ծառ է. և հոգիներ վաստկողը խնաստուն է» Առակ. ԺԱ. 30: Բանալի եղող բաներն են. Տերտուղիանոս, Ադոնիս, Խահառ, Տէմալէնտ, Կարսնա, Եղիուս, Պերգամոն, Յաժ, Կաւ:

- Այս պատասխանը դատան,
- Կ. Պոլիս. — Հրանտ Պ. Մատթէոսեան
- „ Եւնիկէ Յարութիւնեան
- „ Գ. Ս. Գաբրիէլեան
- „ Արմայիս Բ. Վարդուկեան:
- Էօտէմիշ. — Արշաւիք Գ. Բէմալեան:
- Մարտիի. — Ռուբէն Յ. Պրոքթեան:
- Ատապաղար. — Ալեք. Ս. Ալեքսանդրեան:
- Մարզուան. — Պօղոս Տ. Սեփեան:

Ամերիկայի Մեթոդիստ Եկեղեցւոյ Կաթողիկոս, Իմբազի, Փոխ-խմբագիր Ե. Պ. Ս. ԱՆՏՈՆԻԱՆ Գինձանճրար եօդուք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՏՄԱՌՈՐ ՊՕՍՏԱՅԱՆ